

Եգիպտոսի մէջ պատահած երկրաշարժին առիթով Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր դրկած հեռագիրը Եգիպտական Հիւպատոս Մուհամմատ Պասիունիին, եւ նամակը Եգիպտոսի Առաջնորդ Գեր. Տ. Զաւէն Արքեպս. Զինչինեանին եւ անոնցմէ ստացուած շնորհակալութեան գիրերը:

18 October 1992

His Excellency Mr. Mohammad Basiouny
Ambassador of Egyptian Republic
Egyptian Embassy Tel Aviv

We were deeply shocked for the earthquake which happened in Cairo. In our name and in the name of our Brotherhood and Armenian congregation please convey to His Excellency the President of Egypt Mr. Husni Mubarak and to his wise government our deep condolences for all the human losses which occurred by the earthquake. We pray the almighty to give You and Your government strength to rebuild your beautiful country and to give solace for all the members of the deceased affected by the earthquake.

Archbishop Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem

H. E. Archbishop Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem

1 Nov. 1992

I would like to thank you very much for your condolences for the victims of the tragic earthquake which struck Egypt on October 12th, 1992. In fact, I was deeply touched by the sincere feeling of sorrow and sympathy expressed towards Egypt and its people, sharing their pain and grief on this sad occasion.

With my best wishes,
Sincerely
Mohammad Bassiouny
Ambassador

To: H. E. Archbishop Torkom Manoogian,
Armenian Patriarch of Jerusalem.

17 Հոկտեմբեր 1992

Գերաշնորհ

Տ. Զաւեն Ս. Արքեպս. Զինչինեան

Բարեխնամ Առաջնորդ Հայոց Եգիպտոսի

Գահիրէ

Սիրելի Սրբազան Եղբայր,

Խոր կսկիծով լսեցիմք Գահիրէի մէջ մի քանի օրեր առաջ պատահած ահռելի
 երկրաշարժին եւ մեծ թիւով մարդկային կորուստներու եւ նիւթական վնասներու մասին:

Այսօր հեռագրաւ մեր խոր ցաւը յանուն Միաբանութեան եւ ժողովուրդին յայտնեցիմք
 Իսրայէլի մէջ Եգիպտական Դեսպանին որպէս զի մեր զգացումները փոխանցէ Նորին
 Վսեմութիւն Եգիպտոսի Նախագահին եւ անոր Կառավարութեան:

Շատ մտահոգ ենք եւ կ'ուզենք իմանալ եթէ ոեւէ կորուստ ունեցանք մեր համայնքի
 անդամներէն:

Տէրը թող օգնէ բոլորին եւ Զեզի, եւ Ազգային Քաղաքական Ժողովի անդամոց տալ ուժ
 եւ կարողութիւն դիմանալ կարեւորաւու համար այս մեծ հարուածին, եւ վերստին կառուցելու
 երկրաշարժի հետեւանալով եղած վնասները:

Հանեցէք մեր խորագգած զգացումները յայտնել բոլոր վշտացեալներուն:

Եղբայրական ջերմ սիրով,

Աղօթակից

Թորգոմ Արքեպս. Մանուկեան

Պատրիարք Երուսաղէմի

Ամենապատիւ

Տ. Թորգոմ Սրբազան Արքեպս. Մանուկեան

Բարեխնամ Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ

19 Հոկտեմբեր 1992

Ամեն. եւ սիրելի Սրբազան,

Գահիրէի Ազգային իշխանութիւնն խոր շնորհակալութեամբ ստացած է Զեր 17
 Հոկտեմբեր 1992ի նամակը որով Երկուշաբթի, 12 Հոկտեմբերին, Գահիրէի եւ շրջակայ
 քաղաքներու մէջ տեղի ունեցած երկրաշարժին եւ աւերիչ հետեւանումներուն մասին
 մտահոգութիւն, մեղմողներու ընտանիքներուն միջոցառութիւն եւ տնագործներուն ցաւակցութիւն
 կը յայտնէիք:

Կը տեղեկացնենք թէ - Գոհութիւն եւ Փառք Աստուծոյ - մարդկային կորուստներ կամ
 վիրաւորեալներ չունի Եգիպտահայ գաղութը: Ազգային վարժարաններու ներքին պատերուն
 վրայ կան ճեղքուածներ: Երկիրը անշուշտ մեծ վնասներ կրեց, փլած շէնքերու, աւերա-
 ծութիւններու պատճառաւ: Հնագիտական շէնքեր եւ պատմական վայրեր նաեւ կրած են
 վնասներ:

Ի բոլոր սրտէ կը մաղթենք որ Ամենակալ Աստուած մեր ապրած երկիրներուն նաեւ
 մեր հայրենիքին խնայէ փորձանքներ, իր հովանիին ներքեւ պահէ մեր ժողովուրդը ի
 խաղաղութիւն եւ ի բարգաւաճութիւն:

Մաղթելով Զեզի առողջութիւն եւ Ս. Աթոռին առաւել պայծառութիւն, մնամ սիրալիք
 ողջունիւ եւ

Խոնարհ Աղօթակցութեամբ

Զաւեն Արքեպս. Զինչինեան

Առաջնորդ Հայոց Եգիպտոսի